Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 17

ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

02.06.2023թ. ժ. 15:00 ՀՀ էկոնոմիկայի նախարարության կոլեգիայի դահլիճ

Խորհրդի անդամներ

1.	Արամ Խաչատրյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
2.	Էդիտա Ղազարյան	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպություն
3.	Սարգիս Կարապետյան	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպություն
4.	Սարգիս Ասատրյանց	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
5.	Հայկազ Ֆանյան	«Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ
6.	Լուսինե Մնացականյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
7.	Էլինա Մարկարյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» ՀԿ
8.	Նիկա Մանուկովա	«Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպություն» ՈԱԱ
9.	Հակոբ Ավագյան	«Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» ՀԿ
10.	Կարեն Զաքարյան	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» ՀԿ
11.	Արա Խզմալյան	«ԸԴՎԱՅԶ բիզնես և իրավաբանական խորհրդատվություն» ՍՊԸ

Քարտուղարության անդամներ

12.	Լիլիթ Հակոբյան	Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության պետ
13.	Հռիփսիմե Հովհաննիսյան	Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության ՊՄԵ բաժնի պետ
14.	Վահե Մխիթարյան	Էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության վարչության ՊՄԵ բաժնի ավագ մասնագետ
15.	Հովսեփ Պատվականյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ղեկավար
16.	Հայկ Մալխասյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու
17.	Դավիթ Աղաջանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ
18.	Ռուբեն Սարուխանյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի տնտեսագետ, տնտեսագետ
19.	Վիկտորիա Կամարյան	ՎԶԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի համակարգող

Հրավիրված անձինք

20.	Արտակ Մանուկյան	Կենտրոնական բանկի խորհրդի անդամ
21.	Մարգարիտա Զալիբեկյան	Արդարադատության նախարարության իրավական ապահովման վարչության պետ
22.	Լուսինե Այվազյան	ՀՀ ՊԵԿ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական համակարգերի փոփոխությունների կառավարման և ազդեցությունների գնահատման բաժնի պետ
23.	Լեռնիկ Հարությունյան	ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ

24.	Արման Մնացականյան	Պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ
25.	Արթուր Ալեքսանյան	Ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժին բաժնի պետ
26.	Սամվել Խարազյան	Առողջապահության նախարարի խորհրդական
27.	Ահարոն Բարսեղյան	Առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետ

Նիստի բացմանը, մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը, ողջույնի խոսքով հանդես եկավ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1. Նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին զեկուցում՝

- *Աշխատանքային օրենսգրքում մի շարք փոփոխությունների հաստատում*
- *Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից շահաբաժինների վճարման կարգավորումների պարզեցում («Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ)*
- *24 միլիոն դրամի շեմը գերազանցող ՀԴՄ կիրառողների համար տեսանկարահանման պահանջ, խախտումները բացահայտելու նպատակով գաղտնի տեսանկարահանման և առգրավման ընթացակարգեր սահմանող իրավական ակտերի նախագծեր*
- *Առևտրային ցանցերի և մատակարար կազմակերպությունների միջև վճարային պարտավորությունների չկատարումը կանխարգելող կարգավորումներ*
- *Գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության ժամկետի 25 տարվա վերին շեմի վերանայում՝ որոշակի տեսակի բազմամյա տնկարկների դեպքում*
- *Հարկային օրենսգրքում փոփոխությունների փաթեթ՝ բիզնեսի կողմից ԲՈՒՀ-երին, միջին մասնագիտական և հանրակրթական հաստատություններին նվիրատվությունների ծավալը մեծացնելու նպատակով*

- *Մշակող արդյունաբերության ոլորտում մասնագետների ներգրավման միջոցառումը հաստատելու մասին կառավարության որոշման նախագիծ*
- *Շրջանառելի՝ բազմակի օգտագործման փարաների շրջանառության համար ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգավորումների հստակեցում («Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ)*

Հարց 2. «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում լրացումներ կատարելու փաթեթ՝ արտարժույթով գնանշում կատարելու դեպքերն ընդլայնելու նպատակով:

Հարց 3.

3.1 ՀԴՄ կտրոնների վրա ԱՏԳԱԱ կամ ՏԳՏԴ կոդերի սխալ տպագրման դեպքում ՀԴՄ կիրառման կանոնների խախտման համար նախատեսված տուգանքի նվազ չափի սահմանում:

3.2 ՀԴՄ կտրոնի վրա ապրանքի անվանումը և ապրանքային դիրքը, աշխատանքի կամ ծառայության անվանումը և կոդը, գնվող ապրանքի քանակը և դրա չափման միավորը տպագրելու պարտականությունը բոլոր ՀԴՄ կիրառողների վրա տարածելու, ինչպես նաև մի շարք ապրանքներ հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորելու հետ կապված խնդիրների քննարկում:

Հարց 4. Առողջապահության պարտադիր ապահովագրության փաթեթի վերաբերյալ խնդիրների և առաջարկների քննարկում:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Հարց 1. ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ղեկավար Հովսեփ Պատվականյանի զեկուցմամբ ներկայացվեց նախորդ նիստերի ընթացքում ընդունված որոշումների կատարման ընթացքի հետ կապված տեղեկատվություն: Մասնավորապես ներկայացվեց, որ

- ✓ Աշխատանքային օրենսգրքի բարեփոխումների շրջանակում, երկրորդ ընթերցմամբ, ընդունվել է ՓՄՁ զարգացման խորհրդի շրջանակում ձևավորված օրենսդրական առաջարկությունը, որով՝

- վերանայվել են արձակուրդի կարգավորումները՝ եթե աշխատողը երկուսուկես տարի անընդմեջ խուսափում կամ հրաժարվում է իրեն հասանելիք ամենամյա արձակուրդից, ապա գործատուն այն տրամադրում է առանց աշխատողի դիմումի,
- նախատեսվել է փորձնակության (internship) ինստիտուտը, որը կնպաստի ուսումնական հաստատություններում սովորող կամ այդ հաստատությունները նոր ավարտած (ավարտելուց հետո մեկ տարվա ընթացքում) անձանց աշխատանքային փորձառություն ձեռք բերելուն,

Հարցի հետ կապված Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը հետաքրքրվեց, ինչ փուլում է Աշխատանքային օրենսգրքի՝ խորհրդի շրջանակներում մշակված մեկ այլ՝ հեռավար և համակցված հեռավար եղանակով աշխատանքների իրականացման հետ կապված առանձնահատկությունների ամրագրման նպատակով մշակված օրենսդրական առաջարկի վերաբերյալ: Նշյալի մասով պարզաբանումներ ներկայացրեց Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու Հայկ Մալխասյանը:

✓ ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքում փոփոխությունների նախագիծը, որով նախատեսվում է ընդունմամբ ընկերությունների համար կստեղծվի ձևավորված շահույթն իր մասնակիցների միջև առավել հաճախ բաշխելու հնարավորություն՝ ինչը կնպաստի ՓՄՁ սուբյեկտների կողմից իրենց մասնակիցներին օրինական կարգով շահույթի մասը վճարելուն: Նման կարգավորումը կնպաստի ՓՄՁ սուբյեկտ ՍՊԸ-ների ստեղծմանը և դրանցում ներդրումների կատարմանը:

✓ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթ, որով

- սահմանվել են առևտրային ցանցի և մատակարարների հարաբերությունների ընդհանուր պահանջներ.
- նախատեսվել են մատակարարի ապրանքի ընտրության չափանիշները և պայմանները, նոր մատակարարների մուտքն առևտրային ցանց.

- հստակեցվել է առևտրային ցանցի հետ կնքվող պայմանագրի էական պայմանները և այլն:

Տեղեկատվություն ներկայացրեց նաև բիզնեսի կողմից ԲՈՒՀ-երին, միջին մասնագիտական և հանրակրթական հաստատություններին նվիրատվությունների ծավալը մեծացնելու, շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարաների շրջանառության համար ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգավորումների հստակեցման նպատակով մշակված հարկային օրենսգրքում փոփոխությունների փաթեթների, ինչպես նաև մշակող արդյունաբերության ոլորտում մասնագետների ներգրավման միջոցառումը հաստատելու մասին կառավարության որոշման նախագծերի վերաբերյալ տեղեկատվությունը: Նշվածի առումով հարցադրումներ և պարզաբանումներ արեցին նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանն ու ՀՆԽ ղեկավար Հովսեփ Գևորգյանը, ինչպես նաև Կենտրոնական բանկի խորհրդի անդամ Արտակ Մանուկյանը:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Հարց 2. Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի իրավաբան Արամ Խաչատրյանի և ՀՆԽ–ի ավագ իրավաբան Հայկ Մալխասյանի համազեկուցմամբ ներկայացվեց «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում լրացումներ կատարելու փաթեթը, որի նպատակն է ստեղծել էլեկտրոնային առևտրի միջոցով արտահանման զարգացման համար բարենպաստ օրենսդրական միջավայր: «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը թույլ չի տալիս արտարժույթով գնանշում կատարել արտարժույթով, եթե պայմանագիրը կնքվել է մի կողմից՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի իսկ մյուս կողմից՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ռեզիդենտի կամ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ոչ ռեզիդենտի միջև: Միաժամանակ օրենքը նաև չի նախատեսում նման պայմանագրի շրջանակներում արտարժույթով վճարումներ:
Այս կարգավորումների առկայությունը խոչընդոտ է հանդիսանում ՀՀ տնտեսավարողների համար՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց հետ հեռավար կարգով՝ էլեկտրոնային առևտրի և նման այլ եղանակներով իրականացման ընթացքում արտարժույթով գնանշում կատարելու համար, ինչ իր հերթին խոչընդոտում է էլեկտրոնային առևտրի միջոցով ապրանքների

արտահանումը: Միաժամանակ վճարումների մասով, եթե վճարումը պետք է կատարվի դրամով, ապա վճարող ֆիզիկական անձը ստիպված է վճարել ՀՀ տնտեսավարողի դրամային հաշվի, ինչը ժամանակի և փոխարժեքի գործոնով պայմանավորված կարող է բերել տնտեսավարողի համար անկանխատեսելի կորուստների:

Հարցի առնչությամբ առարկություններ և հարցադրումներ ներկայացրեց ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ Լեռնիկ Հարությունյանը, մասնավորապես՝ վերջինս ներկայացրեց իր մտահոգությունները՝ կապված այն հանգամանքով, որ մի քանի արժույթով գնանշման դեպքում ինչպես և ինչ արժույթով են իրականացվելու եկամուտների հաշվեգրումը:

Քննարկման ընթացքում դիտարկումներ ներկայացրեցին, նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը, կենտրոնական բանկի խորհրդի անդամ Արտակ Մանուկյանը, ենթախորհրդի անդամներ Կարեն Զաքարյանը, Հակոբ Ավագյանը և այլոք:

ՈՐՈՇՎԵՑ

Հիմք ընդունելով կենտրոնական բանկի խորհրդի անդամ Արտակ Մանուկյանի դիտարկումը, որոշվեց նախագծի շուրջ հետագա քննարկումները իրականացնել նախագծի պաշտոնական շրջանառման փուլում՝ Կենտրոնական բանկի, Ֆինանսների նախարարության և Պետական եկամուտների կոմիտեի դիրքորոշումների ներկայացման համատեքստում:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Հարց 3. Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոնի տնօրեն Հայկազ Ֆանյանի և Հայաստանի ներդրումային խորհրդի տնտեսագետ Դավիթ Աղաջանյանի համազեկուցմամբ ներկայացվեց հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության հետ կապված մի քանի խնդիր: Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ «Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների (բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասում նշված դեպքի) խախտման համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է 200 հազար դրամի և տվյալ հարկ վճարողի բոլոր հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.5 տոկոսի գումարի հանրագումարի չափով, բայց ոչ ավելի, քան 10 միլիոն դրամը:»:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 03.12.2020թ. N 1976-Ն որոշմամբ, որով հաստատված են հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները, սահմանված են այն դեպքերը, որոնք համարվում են ՀԴՄ կիրառման կանոնների խախտում:

ՀԴՄ կտրոնի վրա ԱՏԳԱԱ կամ ԱԴԳՏ կոդը տպելու պարտավորություն ունեցող հարկ վճարողների համար որպես խախտում է համարվում նաև՝

ա. ՀԴՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքի անվանման ԱՏԳԱԱ-ի 4 նիշին համապատասխան ապրանքային դիրքում չներառված ապրանքի կամ այդ դիրքում ներառված՝ փաստացի չվաճառված ապրանքի անվանման տպագրումը,

բ. ՀԴՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքի անվանման ԱՏԳԱԱ-ի 4 նիշին չհամապատասխանող ապրանքային դիրքի տպագրումը,

գ. ՀԴՄ-ի կտրոնի վրա ընդունված աշխատանքի կամ ստացված ծառայության անվանման դասակարգչով սահմանված ծառայության կոդում (4 նիշում) չներառված աշխատանքի կամ ծառայության կամ այդ կոդում ներառված՝ փաստացի չկատարված աշխատանքի կամ փաստացի չմատուցված ծառայության անվանման տպագրումը,

դ. ՀԴՄ-ի կտրոնի վրա ընդունված աշխատանքի կամ ստացված ծառայության անվանման դասակարգչով սահմանված ծառայության կոդին (4 նիշին) չհամապատասխանող աշխատանքի կամ ծառայության կոդի տպագրումը.

Նկարագրված նորմերի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ ՀԴՄ-ի կիրառման կանոնների խախտման համար նախատեսված պատասխանատվության միջոցը՝ անփոփոխ չափի տուգանքը, հավասարապես կիրառելի է խախտման ցանկացած տեսակի դեպքում: Խնդիրն այն է, որ վերը թվարկված խախտումների պատճառները և հետևանքները սկզբունքորեն տարբեր են, տարբեր է նաև դրանց վտանգավորության և պետական բյուջեի եկամուտների վրա ազդեցությունը, հետևաբար համաչափ չէ նույն չափի տուգանքի կիրառումը բոլոր տեսակի խախտումների դեպքում:Այսպես, ՀԴՄ-ի կտրոն չտրամադրելու (շրջանառությունը չհայտարարագրելը) և վաճառված ապրանքը սխալ դասակարգելու հետևանքով ՀԴՄ կտրոնի վրա ԱՏԳԱԱ սխալ կոդ տպագրելը հավասար վտանգավորության աստիճանի խախտումներ չեն: Ի տարբերություն առաջինի՝ դասակարգիչը սխալ տպագրելը կարող է լինել տեխնիկական սխալի, մասնագիտական ունակությունների թերության

հետևանքով սխալ դասակարգման կամ որևէ այլ պատճառով, որի հետևանքով հաշվարկվող հարկի գումարը և պետության եկամուտները չեն նվազում:

Բազմաթիվ են դեպքերը, երբ տնտեսավարողները դժվարանում են դասակարգել ապրանքները, քանի որ դա հաճախ պահանջում է մասնագիտական ունակություններ: Նույնը վերաբերում է նաև աշխատանքների և ծառայությունների դասակարգմանը:

Խնդիրն առավել կարևորվում է այն պատճառով, որ առաջիկայում 24 միլիոնից ավել տարեկան շրջանառություն ունեցող հարկ վճարողները ևս նշված տեղեկատվությունը պետք է արտացոլեն ՀԴՄ կտրոնի վրա: Վերջիններիս համար առավել դժվար է լինելու ճշգրիտ դասակարգումը, ինչը կարող է հանգեցնել անհարկի տուգանքների:

Վերոհիշյալ համատեքստում քննարկումներն ընթացան խնդրի առաջարկվող լուծման շուրջ: Մասնավորապես, որպես լուծում առաջարկվող օրենսդրական փոփոխությունների նախագծի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնում ապրանքային դիրքը, աշխատանքի կամ ծառայության կոդը, իսկ հանրային սննդի ծառայությունների մատուցման դեպքում՝ նաև փաստացի մատուցվող ծառայության շրջանակներում տրամադրվող ճաշացուցակը (կերակրատեսակների, խոհարարական արտադրատեսակների, խմորեղենի և հացաբուլկեղենի և գնովի այլ ապրանքների անվանումները) սխալ տպագրելու դեպքերում առաջարկվում է նախատեսել նախազգուշացում, իսկ նախազգուշացումը կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկին կատարելու դեպքում՝ տուգանք՝ 10000 ՀՀ դրամի չափով:

ՈՐՈՇՎԵՑ

Նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանի առաջարկությամբ որոշվեց դիմել Մրցակցության պաշտպանության հանձնաժողով՝ վերջինիս իրավասության շրջանակներում խնդրի մրցակցային դաշտում առկա ռիսկերի հետ կապված խնդիրների լուծմանը ուղղված կարգավորումներ ներդնելու նպատակով:

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Հարց 4. «Ամերիկայի Առևտրի պալատը Հայաստանում» կազմակերպության ղեկավարի զեկուցմամբ, խորհրդի անդամները ներկայացրեցին առողջապահության պարտադիր

ապահովագրության փաթեթի վերաբերյալ նախկինում ևս ներկայացրած, բայց լուծում դեռևս չստացած մտահոգությունները, որոնց մասով որոշակի պարզաբանումներ տրամադրեց Առողջապահության ոլորտի փորձագետ Սամվել Խարազյանը:

ՈՐՈՇՎԵՑ

Հաշվի առնելով փաթեթի ծավալն ու վերջինիս վերաբերյալ խորհրդի անդամների ունեցած առաջարկությունների քննարկման անհրաժեշտությունը, առողջապահության նախարարության ներկայացուցիչների հետ ձեռք բերված պայմանավորվածություն՝ առողջապահության պարտադիր ապահովագրության փաթեթի օրակարգով հրավիրել ՓՄՁ զարգացման ենթախորհրդի հերթական նիստ 2023 թվականի հունիսի 29–ին:

Նիստը նախագահող
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

X _____

_____

(ստորագրություն)

Արձանագրությունը կազմեց՝
ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊՄԵ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ